# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 34

### ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին՝

1.Գեղամասար համայնքի Սոթք բնակավայրի սեփականություն հանդիսացող 05-080-0211-0004 ծածկագրում ամրագրված 1.65հա /սեփականության վկայական N 15072019-05-0019/ գյուղատնտեսական նշանակության արոտավայրը աճուրդ վաճառքի միջոցով օտարել:

2.Աճուրդի մեկնարկային գինը՝ 1հա հողատեսքի համար սահմանել 54000 ՀՀ դրամ: Սակարկության քայլի և կանխավճարի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:Մուտքավճարի չափը 1000/մեկ հազար/ ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԼՈՅԱՆ ՆՎԵՐ

ԿԵԽՎԱՅԱՆ ՌՈՒՍԼԱՆ

ՆՇԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՇԱՀՈՒՎԱՐՅԱՆ ՊԱՎԵԼ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՍԻՄՈՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԵՏԱՐԱՆ
ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ГЕГАМАСАР * РА ГЕГАРКУНИКСКАЯ
REGION GEGHAMASAR MUNICIPALITY * RA GEGHARKUNIK
08420681